

---

---

**ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ (1915-1916 ԹԹ.)**

**ԳԱԼՈՒՍՏՅԱՆ Ռ. Ա.**

Հայ մտավորականության ոչնչացումը Հայոց 1915-1916 թթ. ցեղասպանության հանցավոր քաղաքականության փուլերից մեկն է, որի մասին առկա են բազմաթիվ սկզբնաղբյուրներ: Առանձնակի նշանակություն ունեն Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության դաշնակից պետությունների՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի արխիվային փաստաթղթերը:

Երիտթուրքական կառավարությունը, օգտվելով պատերազմական իրավիճակից և իր կողքին ունենալով հզոր դաշնակիցներ, խաղալով Քառյակ միության և Անտանտի միջև առկա հակասությունների վրա, ձեռնարկեց հայերին իրենց հայրենիքի մի մասում բնաջնջելու քաղաքականությունը: Այդ ծրագրի իրականացումը սկսվեց բանակում ծառայող հայերի զինաթափումից և ոչնչացումից, որին հետևեց հայ մտավորականության սպանդը: Երիտթուրքական կառավարությունը նպատակ ուներ գլխատել ժողովրդին և ի չիք դարձնել մոտալուտ կոտորածների ժամանակ ինքնապաշտպանության հնարավոր որևէ փորձ:

Ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը այդ քաղաքականության գագաթնակետն էր. Կոստանդնուպոլսում ձերբակալվեցին բազմաթիվ հայ մտավորականներ, որոնց, առանց մեղադրանք ներկայացնելու, արտրեցին Միթիայի անապատային շրջաններ, մասնավորաբար Դեր Զոր: Դա պայմանավորված էր նրանով, որ հայ մտավորականության մեծ մասը կենտրոնացած էր Կ. Պոլսում և այստեղ էին եվրոպական երկրների դեսպանատները, ուր կարող էին բողոքով դիմել հայ մտավորականները: Քահանա Է. Շտիրը իր «Հայերի բնաջնջումը Թուրքիայում» աշխատության մեջ նշում է. «1915 թ. ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը Կ. Պոլսում հանկարծակի ձերբակալվեցին 600 հայ մտավորականներ (պատգամավորներ, գրողներ, հոգևորականներ, բժիշկներ և այլն), և մի քանի օր անց առանց որևէ մեղադրանքի և դատական որոշման նրանց տեղափոխեցին Փոքր Ասիայի խորքերը՝ Կոնիա»<sup>1</sup>: Քահանա Շտիրն իր նամակի հավելվածում՝ թվագրված 1917 թ. օգոստոսի 17-ով, նկարագրում է ցեղասպանության ընթացքը 1915-1916 թթ. և նշում, որ բոլոր հայ պետական ծառայողները հեռացվել էին աշխատանքից. «Ապրիլի 24-25-ը Կոստանդնուպոլսում ձերբակալվել էին 235 հայեր՝ կառավարող գործիչներ հասարակության լավագույն շերտերից, դրանից երեք օր առաջ սկսվել էր մտավորականության ձերբակալությունը

---

<sup>1</sup> Германские источники о геноциде армян; Период Первой мировой войны. Сб. док. и мат., в 2-х т., сост. Степанян С. С., т. 1, Е., 1991, с. 203.

ամբողջ Անատոլիայի տարածքում: Ձերբակալվածներից ոչ մեկի դեմ դատական գործ չհարուցվեց, նրանց մեծ մասը մահապատժի ենթարկվեց առանց դատական որոշման»<sup>2</sup>: Շտիրն իր աշխատության մեջ Կ. Պոլսում ձերբակալված հայերի թիվը նշում է 600, իսկ նամակում՝ 235: Սակայն մի դեպքում նա խոսում է զուտ 235 հայ պաշտոնյաների ձերբակալության մասին, իսկ մյուս դեպքում՝ 600 հայ մտավորականների, որոնց մեջ, բացի հայ պաշտոնյաներից, պետք է լինեին նաև գրողներ, հոգևորականներ, լրագրողներ, բժիշկներ և այլք: Պրոֆեսոր Վոլֆդիտեր Բիլը ևս հաղորդում է, որ Կ. Պոլսում թուրքերը ձերբակալեցին շուրջ 600 հայի՝ պատգամավորների, կուսակցությունների ղեկավարների, գրողների, լրագրողների, քահանաների, բժիշկների, և արտաքսեցին Փոքր Ասիա, բայց որպես ժամանակահատված նշում է ապրիլի 24-26-ը<sup>3</sup>: Շտիրի հաղորդման մեջ կան արժեքավոր այլ տեղեկություններ ևս. նախ, որ մտավորականության մի մասին առանց մեղադրանք ներկայացնելու անմիջապես մահապատժի էին ենթարկել, նաև այն փաստի արձանագրումը, որ մտավորականության ձերբակալությունը Օսմանյան կայսրության ողջ տարածքում սկսվել էր Կ. Պոլսի դեպքերից երեք օր առաջ, ինչը ևս մեկ անգամ ապացուցում է, որ մինչև ապրիլի 24-ը թուրքական կառավարությունը արդեն սկսել էր իրագործել իր նախօրոք կազմած ծրագիրը: Այս իրողությունը հաստատում է գերմանական մեկ այլ աղբյուր, որտեղ նշվում է. «Որպեսզի մինչև կողպուտը և ոչնչացումը հայ ժողովրդին ստիպեին լռել, արդեն ապրիլի 28-ի լույս 29-ի գիշերը Կոստանդնուպոլսի հայության բոլոր հոգևոր առաջնորդներին՝ պատգամավորներին, քաղաքական գործիչներին, գրողներին, բժիշկներին, արվեստագետներին, պրոֆեսորներին և այլոց, անկախ կուսակցական ու կրոնական պատկանելությունից, ձերբակալեցին և, արդեն մինչև լուսաբաց, ուղարկեցին երկրի խորքերը՝ Անգորա (Անկարա), Կոնիա, Դիարբեքիր: Նույն ճակատագրին արժանացան երկրի կենտրոնում տեղակայված քաղաքների բոլոր մտավորականները»<sup>4</sup>: Հավանաբար, հեղինակը, օգտվելով Հայոց ցեղասպանության մասին Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրություններից, նշել է այդ դեպքերին վերաբերող հաղորդագրության ամսաթիվը. «Ձերբակալվածների ստույգ թիվը հայտնի չէ, և առայժմ այդ մասին պաշտոնական որևէ տեղեկություն տալն արգելված է,

\* «Անատոլիա»՝ քահանան այստեղ նկատի է առնում նաև Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասը՝ Արևմտյան Հայաստանը: Նշենք, որ Հայկական լեռնաշխարհը կամ նրա որևէ մասը երբեք չեն մտել և մտնում Անատոլիայի մեջ, որն ընդգրկում է միայն Փոքր Ասիայի տարածքը: Տե՛ս Դանիելյան Է., Հայկական տեղանունների պաշտպանության հիմնախնդիրը տեղեկատվական պատերազմի քարտեզագրական ոլորտում, Երկիր Հայրենի, 17.10.2008, էջ 11:

<sup>2</sup> Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), Материалы Политархива МИД Кайзеровской Германии, отв. ред. В. А. Микаелян, Е., 1995, с. 456.

<sup>3</sup> Տե՛ս Германские источники о геноциде армян, т. 1, էջ 99: Ձերբակալված մտավորականների անվանացանկը տե՛ս Լեվսիլու Յ., Գաղտնի տեղեկագիր. Հայ ժողովրդի ջարդերը, Ե., 2003, էջ 129:

<sup>4</sup> Германские источники о геноциде армян, т. 1, с. 233:

պաշտոնական որոշ տվյալների համաձայն պիտի որ 180 անձ կալանավորված լինի: ...Կալանավորվել են հատկապես մտավորականները, այն է՝ բժիշկներ, դեղագործներ, լրագրողներ, այդ թվում նաև թուրքական «Մաբահ» թերթի գլխավոր խմբագիրը (Քելեկյան) և թուրքական համալսարանի քաղաքական պատմության պրոֆեսոր Տիրան Կոծոկյան էֆենդին: Բոլոր դեպքերում, սակայն, մարդիկ, որոնք պատկանում են հայկական տարբեր քաղաքական կուսակցությունների, առաջին հերթին Հնչակյանների (սոցիալ-դեմոկրատների) կուսակցությանը և այնուհետև դաշնակցականների (ռադիկալների) և ռամկավարների (դեմոկրատների), հայերի, որոնք այսօրինակ քաղաքական ուղղությունների արդեն վաղուց են պատկանում և յուրաքանչյուր անձնավորություն ինքնուրույն քաղաքական գործունեությամբ է աչքի ընկել, ու որոնք կապ ունեն արտասահմանի հայկական քաղաքական միությունների կամ կոմիտեների հետ»<sup>5</sup>: Բուլղարիայի դեսպան Ն. Կոլուշեր Սոֆիա ուղարկած իր զեկուցմանը կցել էր Մուշից ստացված մի հաղորդում, որում նշվում է, որ զգալի թվով հայեր են սպանված՝ որպես «Դաշնակ-ցության» կոմիտեի անդամներ<sup>6</sup>: 1915 թ. մայիսի 9-ով թվագրված ավստրոհունգարական հաղորդագրությունը փաստում է, որ մինչև տվյալ ժամանակահատվածը մոտավորապես 500 ձերբակալություններ են կատարվել հայ մտավորականության շրջանում<sup>7</sup>: Նույն աղբյուրին պատկանող և մայիսի 21-ով թվագրվող մեկ այլ փաստաթղթում նշվում է, որ բազմաթիվ կալանավորվածներից կալանքի մեջ միայն 50 անձ է թողնվել («Հնչակի», ինչպես և «Դաշնակցության» այստեղի հայտնի անդամներ Թոմաս Բոյաջյանը (դպրոցի տնօրեն), Բահաբարյան Վահանը (վաճառական), Արզնյանը և Սեդրակ Թոքաջյանները)<sup>8</sup>: Իսկ ի նչ պատահեց ձերբակալված մյուս 450 հայ մտավորականների հետ: Պարզ է, որ նրանց ազատ չեն արձակել, այլ աքսորել են կամ հենց տեղերում մահապատժի ենթարկել: Այս երկու փաստաթղթերը ևս մեկ անգամ հիմնավորում են, որ Կ. Պոլսում ձերբակալված հայ մտավորականներից գրեթե ոչ ոք ողջ չի մնացել:

1915 թ. հունիսի 18-ին Հ. Վանզենհայնը\* ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին\* ներկայացնում է Կոստանդնուպոլսի իրական իրավիճակը: Ըստ

<sup>5</sup> Օհանջանյան Ա., Մարտիրոսյան Վ., Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915-1918), Ե., 2004, էջ 13:

<sup>6</sup> Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում բուլղարական դիվանագիտական փաստաթղթերի լույսի ներքո, թարգմ. Զ. Մ. Ղասաբյան, Կ. Հ. Ճինգոզյան, Ե., 1996, էջ 17:

<sup>7</sup> Տե՛ս Օհանջանյան Ա., Մարտիրոսյան Վ., նշվ. աշխ., էջ 17:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 19:

\* Վանզենհայն Հանս (1859-1915) – գերմանացի դիվանագետ, 1912-1915 թթ. Կայզերական Գերմանիայի դեսպանը Թուրքիայում:

\* Բեթման Հոլվեգ Թեոբալդ (1856-1921) – գերմանական պետական գործիչ: 1907-1909 թ.՝ ներքին գործերի նախարար, 1909-1917 թ. կանցլեր:

նրա հաղորդման՝ հունիսի 15-ին մայրաքաղաքի Սերասկերաց հրապարակում տեղի էր ունեցել 20 հայերի մահապատիժ, որոնք կալանավորվել էին պետական դավաճանության մեղադրանքով<sup>9</sup>: Հունիսի 17-ին տեղական թերթերը հրապարակեցին նրանց անունները, ինչից Վանգենհայրը իրավացիորեն եզրակացնում է, որ նրանք Հնչակյան կուսակցության անդամներ էին: Լինելով Օսմանյան կայսրությունում Կայզերական Գերմանիայի դեսպանը՝ նա միայն արձանագրում է փաստը և չի տալիս որևէ մեկնաբանություն: Իսկ Յոհաննես Լեփսիուսը\*, կաշկանդված չլինելով նման պաշտոնական պարտականություններով ու առաջնորդվելով իր խղճի մտքը, ականատես լինելով պատմական հայրենիքից հայ ժողովրդի տեղահանությանը և նրա ոչնչացմանը, իր պարտքն է համարում այդ մասին տեղեկացնել Կայզերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը, որը, իր կարծիքով, անտեղյակ էր դեպքերին: 1915 թ. հունիսի 22-ի նամակում նա նշում է. «Մոտ 120 դաշնակցական առաջնորդներ, որոնք քաղաքականապես լոյալ էին, ձերբակալվել են: Մտավախություն կա, որ նրանք խմբակային մահապատժի կենթարկվեն»<sup>10</sup>: Այսպիսով, նա նշում է, որ նույնիսկ քաղաքականապես չեզոք հասարակական և քաղաքական գործիչները, որոնք ոչ մի վտանգ չէին ներկայացնում, ձերբակալվել են և կարող են սպանվել:

Ըստ Տրապիզոնում գերմանական հյուպատոս Բերգֆելդի\* հաշվետվության՝ 1915 թ. հունիսի 24-ին ձերբակալվել էին Տրապիզոնի հայկական կոմիտեի ղեկավարները և Սամսունով տեղափոխվել երկրի խորքերը<sup>11</sup>: Բուլղարիայի դեսպան Կոլուշևը Մոֆիա ուղարկած հունիսի 27-ի հաշվետվությանը կցել է իր թղթակիցներից ստացված տեղեկությունները, նաև «Դաշնակցության» կոմիտեից ստացված մի նամակ, նպատակ ունենալով՝ «...Ձեր (նախարար Ռոդոսլավովի) իմացությանը հասցնել երիտթուրքական կառավարության կարգադրությամբ ու հովանավորությամբ ամբողջ աշխարհի աչքի առաջ կատարված ջարդերի մի նոր շարք»<sup>12</sup>: Նամակում նշվում է. «Երկու շաբաթ առաջ Կ. Պոլսում կախաղան բարձրացված 20 դժբախտներից բացի, մեղադրվելով, թե անկախ Հայաստանի ցնորամիտ գաղափարի հետևողներ են, 12

<sup>9</sup> Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), док. N 376, с. 183.

\* Լեփսիուս Յոհաննես (1858-1926) – գերմանացի հասարակական գործիչ, միսիոներ: Բրավանացրել է հայանպաստ գործունեություն: 1914 թ. հիմնել է Գերմանա-հայկական ընկերություն: 1915 թ. հուլիսին հանդիպել է թուրք պարագլուխների հետ և պահանջել դադարեցնել հայերի ցեղասպանությունը: Հրապարակել է բազմաթիվ աշխատություններ: 1921 թ. Սողոմոն Թեհլիրյանի դատավարության ժամանակ էլույթ է ունենցել երիտթուրքերի հանցավոր քաղաքականությունը մերկացնող ճառով:

<sup>10</sup> Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), с. 189.

\* Բերգֆելդ – Տրապիզոնում գերմանական հյուպատոս 1910-1916, 1918 թթ.

<sup>11</sup> Германские источники о геноциде армян, т. 1, с. 218. Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), док. N 35, с. 191.

<sup>12</sup> Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում բուլղարական դիվանագիտական փաստաթղթերի լույսի ներքո, էջ 15:

հայեր կախված են Կեսարիայում (3 դաշնակցական, 3 հնչակյան և 6 վաճառականներ):... Թուրքական շրջաններում խոսում են տեղահանված մեր ընկերներից շատերին (Ակնունի, Շահրիկյան, Վարդգես, Ջարդարյան, Խաժակ, պատգամավոր Ջոհրայ, հնչակյան Ջանգուլյան և ուրիշներ, բոլորին չես թվարկի) մոտ օրերս կախադան բարձրացվելու մասին»<sup>13</sup>:

Գերմանացի պաշտոնյաները երկրի ղեկավարությանն ուղղած հաշվետվություններին երբեմն կցում էին նաև ամերիկյան աղբյուրներից ձեռք բերված տեղեկությունները՝ դրանք արժանահավատ համարելով: Նման մի հաշվետվության («Հայերի հանդեպ չարագործությունների գրություններ») վեցերորդ հավելվածը Հալեպում ամերիկյան հյուպատոս Ջ. Ջեկսոնի 1915 թ. օգոստոսի 3-ի հաղորդումն է. «Պետական (թուրք) պաշտոնյաները ծաղրանքով հարցնում են, թե ինչ են անելու ամերիկացիները հիմա միսիոներական հաստատությունների հետ, երբ իրենք ոչնչացնեն հայերին: ...Քանի որ ներքին առևտրի 90%-ը հայերի ձեռքում էր, արդյունքն այն է, որ երկիրը կանգնած է փլուզման եզրին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործարքների մեծ մասը կատարվում էր վարկով, ուստի հարյուրավոր ոչ հայ առևտրականներ կանգնած են սնանկության եզրին: Տեղահանության ենթարկված տարածքներում, մի քանի բացառությամբ, չի մնացել ոչ մի քարտաշ, կոշկակար, կավագործ... դեղագործ, բժիշկ, իրավաբան կամ որևէ ծառայող կամ առևտրական. երկիրը փաստորեն կհայտնվի անօգնական վիճակում»<sup>14</sup>:

Ցավալի է այն, որ հայ ժողովրդի ոչնչացման մասին հաղորդումներն ավելի կանոնավոր կերպով օտարերկրյա դիվանագետների կողմից իրենց երկիր սկսեցին ուղարկվել միայն այն ժամանակ, երբ հարվածի տակ հայտնվեցին սոլյալ երկրների տնտեսական շահերը:

Ավստրոհունգարական փաստաթղթերը վկայում են, որ հաշվեհարդարից չխուսափեցին նաև բարձր պաշտոններ զբաղեցնող հայերը: Կ. Պոլսից նման մի հաղորդում թվագրված է 1915 թ. սեպտեմբերի 2-ով. «Արտաքին գործերի նախկին մինիստր Նորատունկյանը, ինչպես նաև փոստի նախկին մինիստր Ռսկան էֆենդին, լավագույն մինիստրներից մեկը, փախուստի մեջ են: Հայտնի պատգամավոր Վարդգեսը արքային ասելով, սակայն կրկին վերադարձել է և նորից հիմա արքային: Նախկին պատգամավոր Ջոհրայը պիտի որ սպանված լինի»<sup>15</sup>:

Այսպիսով, Հայոց 1915-1916 թթ. ցեղասպանության իրականացման պետական քաղաքականության մեջ հայ մտավորականության ոչնչացման առանձին փուլ լինելու հանգամանքը հաստատվում է նաև Օսմանյան կայսրության դաշնակից երկրների արխիվային փաստաթղթերով: Դրա կազմակերպված իրականացումը փաստում են նաև հանցագործությանը ժամանակակից և դրան զոհ դարձած մտավորականները, մասնավորաբար, ըստ «Մաբահ» թերթի խմբագիր Քելեկյանի. «Իթթիհատականները գիտական

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>14</sup> *Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919)*, с. 393.

<sup>15</sup> **Օհանջանյան Ա., Մարտիրոսյան Վ.**, նշվ. աշխ., էջ 57:

*ճշգրտութեամբ լը վարելու վրայ էին հայկական հալածանքները... իսկ հայկական հալածանքը անշուշտ մինչև վերջը պիտի տարուէր»<sup>16</sup>:*

*Մեծ Եղեռնի ընթացքում մտավորականության ոչնչացման փուլի առկայությունը գալիս է ևս մեկ անգամ ապացուցելու այն իրողությունը, որ երիտթուրքական կառավարությունը հայերի ցեղասպանությունը կազմակերպել և իրականացրել է պետական մակարդակով՝ նախօրոք կազմված ծրագրի համաձայն: Հայ մտավորականության հանդեպ հալածանքի ծրագիրը Թուրքիայի Հանրապետության ներքին քաղաքականության կարևոր բաղադրիչն է նաև XXI դարում:*

**УНИЧТОЖЕНИЕ АРМЯНСКОЙ ИНТЕЛЛИГЕНЦИИ  
ВО ВРЕМЯ ГЕНОЦИДА АРМЯН (1915-1916 гг.)**

**ГАЛУСТЯН Р. А.**

Резюме

Сопоставление опубликованных архивных документов Германии, Австро-Венгрии и Болгарии, которые являлись союзниками Османской империи во время Первой мировой войны, свидетельствует о том, что уничтожение армянской интеллигенции являлось одним из этапов геноцида армян в Османской империи в 1915-1916 гг., преследовавшее цель обезглавить нацию и тем самым реализовать план по уничтожению армянского народа. Уничтожение армянской интеллигенции доказывает тот факт, что геноцид армян был спланирован и осуществлен Иттихадской партией (младотурками) на государственном уровне.

**THE EXTERMINATION OF THE ARMENIAN  
INTELLIGENTSIA DURING THE ARMENIAN GENOCIDE (1915-1916)**

**R. GALUSTYAN**

Abstract

The analysis of the published archives from Germany, Austria -Hungary and Bulgaria, the allies of Ottoman Empire during the World War I, demonstrates that the extermination of Armenian intelligentsia was one of the crucial stages of the Armenian Genocide in the Ottoman Empire in 1915-1916 and aimed at decapitating the nation.

The extermination of the Armenian intelligentsia proves the fact that the Armenian Genocide had been planned and carried out by Ittihad party (Young-Turks) on the state level.

<sup>16</sup> Թեղիկ, Յուշարձան նահատակ մտավորականութեան, Ե., 1990, էջ 139: